ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

2012 թ. ապրիլի 18-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովը՝ նվիրված բաժանմունքի 2011 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության արդյունքներին:

Նիստի մասնակիցները մեկ րոպե լռությամբ հոտնկայս հարգեցին նախորդ տարեկան ընդհանուր ժողովից հետո վախճանված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Հրաչ Բարթիկյանի, Մանվել Զուլալյանի և թղթակից անդամ Սիմոն Կրկյաշարյանի հիշատակը:

Բաժանմունքի 2011 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության արդյունքների մասին հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը*:*

Բաժանմունքն իր կազմում ընդգրկում է Պատմության, Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի, Հ. Աճառյանի անվան լեզվի, Մ. Աբեղյանի անվան գրականության, Արևելագիտության, Հնագիտության և ազգագրության, Արվեստի ինստիտուտները, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը: Հաշվետու տարում բաժանմունքի կազմում ընդգրկվել է Հայկական հանրագիտարանի խմբագրությունը:

Հաշվետու տարում անցկացվել է բաժանմունքի 7 ընդհանուր ժողով և բյուրոյի 16 նիստ, որոնցում լսվել են գիտական զեկուցումներ, քննարկվել գիտական և գիտակազմակերպական բնույթի բազմաթիվ հարցեր:

Բաժանմունքի հունիսի 29-ի ընդհանուր ժողովում տեղի է ունեցել բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի ընտրություն (ընտրվել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը):

Բաժանմունքի ապրիլի 8-ի ընդհանուր ժողովում տեղի է ունեցել ՀՀ ԳԱԱ Թորոս Թորամանյանի անվան մրցանակի շնորհման քվեարկություն (մրցանակ է շնորհվել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասրաթյանին և ճարտ. դ. Գառնիկ Շահկյանին):

Բաժանմունքի նոյեմբերի 28-ի ընդհանուր ժողովում լսվել և քննարկվել է ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամների թեկնածուների առաջադրման մասին հարց [առաջադրվել և ապա ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովում հաստատվել են Հայկ Խաչատրյանը (փիլիսոփայություն) /ԱՄՆ/, Գևորգ Բարդակչյանը (գրականագիտություն) /ԱՄՆ/, Անահիտ Տոնապետյանը (լեզվաբանություն) /Ֆրանսիա/, Բորիս Մարտիրոսյանը

(մանկավարժություն) /Ռուսաստան/, Հրանտ Պողոսյանը (տնտեսագիտություն) /Ռուսաստան/]:

Յու. Սուվարյանը հանգամանորեն ներկայացրեց բաժանմունքի և Երևանի պետական համալսարանի համատեղ աշխատանքը «Հայագիտության զարգացման հայեցակարգի» և «Հայագիտության ոլորտի զարգացման 2012–2025 թթ. ռազմավարության» մշակման ուղղությամբ: Նա նաև նշեց, որ 2012 թ. հունվարի 12-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատել է «Հայագիտության զարգացման հայեցակարգը, հայագիտության ոլորտի զարգացման 2012–2025 թթ. ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը», և բաժանմունքը ձեռնարկում է միջոցառումներ այդ որոշման իրականացման ուղղությամբ:

Հաշվետու տարում լրացավ Անին Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք հռչակելու 1050-ամյակը: Բաժանմունքի ջանքերով կատարվել է ՀՀ կառավարության հաստատած՝ այդ կարևոր հոբելյանին նվիրված միջոցառումների ծրագրի մի մասը: Կազմակերպվել է միջազգային գիտաժողով՝ «Անին միջնադարյան Հայաստանի քաղաքական և քաղաքակրթական կենտրոն» խորագրով, որին մասնակցել են նաև աշխարհի մի շարք երկրներից ժամանած հայագետներ: Ընդարձակ առաջաբանով վերահրատարկվել է Ն. Մառի «Անի» աշխատությունը (ռուսերեն), հրատարակվել է «Օտար աղբյուրները Անի մայրաքաղաքի մասին» ժողովածուն, հրատարակության է պատրաստվում գիտաժողովի նյութերի ժողովածուն:

Հաշվետու տարում արդյունավետորեն են աշխատել բաժանմունքի հիմնարկները: Յու. Սուվարյանը ներկայացրեց մի քանի կարևորագույն արդյունքներ:

Պատմության ինստիտուտը հրատարակել է «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակի 3-րդ և 4-րդ հատորների առաջին ստվարածավալ գրքերը, որոնք շարադրված են արխիվային հարուստ նյութերի, նորահայտ ու հրատարակված փաստաթղթերի և գիտական առկա գրականության համակողմանի օգտագործմամբ:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտն իրականացրել է արդյունավետ պեղումներ: ԱՄՆ-ի և Եվրոպայի լաբորատորիաներում կատարված անալիզների համադրության շնորհիվ անվերապահորեն հաստատագրվել է, որ Արենի 1 քարայրի պղնձի-քարի դարաշրջանի շերտում բացվել է գինու արտադրության առայժմ հայտնի հնագույն համալիրը (հնձան), ինչը վկայում է, որ Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան շրջանները խաղողագործության և գինեգործության ելակետային օջախ են եղել:

Արևելագիտության ինստիտուտը հրատարակել է «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», «Արևելաասիական ուսումնասիրություններ», ինչպես նաև «Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ» մատենաշարերի հերթական պրակները:

Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում միջազգային փորձի և հայաստանյան պրակտիկայի համադրմամբ մշակվել են

երաշխավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային ռազմավարության զարգացման վերաբերյալ, գնահատվել է տնտեսական զարգացման վրա գիտակրթական համակարգի ներազդեցությունը, մշակվել են տնտեսական աճի վրա գիտության և կրթության ներգործության ինտենսիվացման գերակա ուղղությունները:

Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում ուսումնասիրվել են գիտության փիլիսոփայության և մեթոդաբանության խնդրակարգի մեջ ձևական-տրամաբանական վերլուծության կիրառելիության և էվրիստիկական հնարավորությունների հիմնահարցերը: Վեր են հանվել հումանիտար և հասարակական գիտությունների ու գիտակարգերի տարբերակիչ գծերը, ինչպես նաև ներկայացվել են դրանց մեկնաբանությունները ժամանակակից փիլիսոփայական-մեթոդաբանական տեսությունների համատեքստում:

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում ավարտվել է «Հայոց լեզվի բարբառային բառարանի» վերջին՝ 7-րդ հատորի կազմումը, որն ընդգրկում է 112 հազար բառ:

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում հրատարակության են պատրաստվել «Հայ գրականության պատմության» ակադեմիական վեցհատորյակի առաջին և երրորդ հատորները: Շարունակվել է հայ դասականների երկերի ակադեմիական հրատարակությունը. տպագրվել են Ավետիք Իսահակյանի երկերի ժողովածուի երկրորդ և Լևոն Շանթի երկերի ժողովածուի առաջին հատորները՝ համապատասխան ծանոթագրություններով և բնագրային տարբերակներով:

Արվեստի ինստիտուտը լույս է ընծայել «Հայկական ճարտարապետություն» գիրք-ալբոմը (առաջաբանը՝ Մուրադ Հասրաթյանի), որում ներկայացված է հայ ճարտարապետության անցած ուղին՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը ստեղծել է Բաքու քաղաքին նվիրված էլեկտրոնային կայքէջը, որտեղ զետեղված հարյուրավոր լուսանկարներն ու փոստային բացիկները լուսաբանում են հայկական ընտանիքների, հայապատկան շենքերի, քաղաքում լույս տեսած հայկական մամուլի, գրահրատարակչության, գովազդային հայտարարությունների և ընդհանրապես Բաքվում հայկական երբեմնի մշակութային ներկայության պատմությունը: Առանձին բաժնով ներկայացված են Բաքու քաղաքում 1905, 1918, 1990 թվականներին տեղի ունեցած հայկական կոտորածները լուսաբանող փաստաթղթերն ու լուսանկարները:

Շիրակի հայագիտական հոտագոտությունների կենտրոնը հայտնաբերել է նոր հնավայրեր՝ պալեոլիթյան հուշարձան Բավրա գյուղի տարածքում, վաղբրոնզիդարյան և անտիկ բնակավայրեր ու դամբարանադաշտ Բագրավան գյուղի տարածքում, վաղբրոնզիդարյան բնակավայր Ամասիայի Գառնառիճ գյուղի տարածքում, կատարել պեղումներ Հայկաձորի ուշ ուրարտական ամրոց-բնակավայրի տարածքում:

Ընդհանուր առմամբ, բաժանմունքի ինստիտուտները գործել են արդյունավետորեն: ՀՀ ԳԱԱ և արտաակադեմիական հրատարակչությունների

միջոցով տպագրել են 120 գիրք, որից 9-ը՝ արտասահմանում, և 4 ձեռնարկ, շուրջ 900 գիտական հոդված, որից 126-ը արտասահմանում:

Հաշվետու տարին հարուստ է եղել գիտական միջոցառումներով. կազմակերպվել են 6 միջազգային և 32 հանրապետական գիտաժողովներ:

Բաժանմունքը լուրջ հաջողություններ ունի միջազգային գիտական համագործակցության ոլորտում: Բաժանմունքի ինստիտուտների մեծ մասը պայմանագրերով համագործակցում է աշխարհի առաջատար գիտական մի շարք կենտրոնների հետ:

Կարևոր ձեռքբերումներ կան գիտական կադրերի պատրաստման գործում: Բաժանմունքի ինստիտուտների գիտաշխատողներից 3-ը պաշտպանել են դոկտորական, շուրջ 10-ը՝ թեկնածուական ատենախոսություններ: Թեկնածուական ատենախոսություն են պաշտպանել նաև բաժանմունքի ինստիտուտների 10 ասպիրանտներ և 17 հայցորդներ:

Վերջում Յու. Սուվարյանը խոսեց լուծման ենթակա հիմնախնդիրների մասին:

Զեկուցման շուրջ ծավալված քննարկմանը մասնակցեցին Արվեստի ինստիտուտի փոխտնօրեն, արվ. դ. Աննա Ասատրյանը, *Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բ. գ. դ.* Ավիկ Իսահակյանը, *ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ* Հրանտ Պողոսյանը, *ԳԱԱ թղթակից անդամ* Ալլիտա Դոլուխանյանը, *Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, պ. գ. թ.* Պավել Ավետիսյանը, *Պատմության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ* Աշոտ Մելքոնյանը, *Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ* Ռուբեն Սաֆրաստյանը, *ովքեր, դրական գնահատելով բաժանմունքի գործունեությունը, անդրադարձան գիտահետազոտական աշխատանքների հետ կապված մի քանի հարցերի:*

Բարձրացված հարցերի շուրջ ելույթ ունեցավ Յու. Սուվարյանը:

Բաժանմունքի 2011 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեությունը գնահատվեց դրական:

Բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովը լսեց ու քննարկեց Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ Գևորգ Պողոսյանի *«Արդի ժողովրդագրական վիճակը Հայաստանում և արտագաղթի խնդիրները» ու Արևելագիտության ինստիտուտի փոխտնօրեն, պ. գ. դ.* Պավել Չոբանյանի *«Հայ պատմագրության խնդիրները թուրք-ադրբեջանական կեղծարարության դեմ պայքարում» գիտական զեկուցումները:*

Բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովում գիտական զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամներ Անահիտ Տոնապետյանը *(«Ժամանակակից արևմտահայերենի իրավիճակի քննական ուսումնասիրության մեթոդները») և* Հրանտ Պողոսյանը *(«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման մի քանի տեսանկյուններ):*

ՀՐԱՆՏ ՔՈՉԱՐՅԱՆ